ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝ Հեղինե Ջաղինյան
Գնումների քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ

2. Գործուղման վայրը և ժամկետները.
ք. Պրահա, Չեխիայի Հանրապետություն, 26.11.2024-29.11.2024թթ. ներառյալ

3. Հրավիրող կողմը. Չեխիայի Հանրապետության ֆինանսների նախարարություն

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).
Չեխիայի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից տրամադրվող տեխնիկական աջակցության շրջանակում ճանաչողական այց՝ «Պետություն-մասնավոր գործընկերության գործարքներ», «Պետական բյուջե և գանձապետարան» և «Պետական պարտքի կառավարում» թեմաների վերաբերյալ

5. Քննարկված թեմաները՝

• «Պետություն-մասնավոր գործընկերության գործարքներ», մասնավորապես, ՊՄԳ պայմանագրերից բխող հիմնական ֆիսկալ ռիսկերը, ՊՄԳ կարգավորման իրավական դաշտը, ներառյալ ՊՄԳ նախագծերի մշակման և իրականացման հետ կապված կանոններն ու ընթացակարգերը, կառավարման ինստիտուցիոնալ շրջանակը, կիրառելի չափանիշները և մասնավոր գործընկերոջ ընտրության կարգը,

• Պետական բյուջե և գանձապետարան - Գանձապետական համակարգը, գանձապետական միասնական հաշիվը և դրա առանձնահատկությունները,

• Պարտքի կառավարում - Պետական պարտքի ռիսկի կառավարում, պարտքի կառավարման մեջ ածանցյալ գործիքների օգտագործում, աշխատանքներ ներդրողների հետ և վերջիններիս բազայի դիվերսիֆիկացում, պետական պարտատոմսերի մանրածախ վաճառք,

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Ուսուցողական այցի շրջանակում Չեխիայի Հանրապետության ֆինանսների նախարարության համապատասխան պաշտոնատար անձանց կողմից մանրամասն և հանգամանալից ներկայացվել է վերոնշյալ թեմաների շրջանակում չեխական փորձը, մասնավորապես ոլորտը կարգավորող իրավական դաշտը, Չեխիայում կիրառվող հիմնական մեխանիզմները և առանձնահատկությունները:

Հանդիպումները անցկացվել են հարցուպատասխանի ձևաչափով, ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացուցիչները ներկայացրել են ՀՀ փորձը, ներկայացրել են անհրաժեշտ հարցադրումներ, որոնց վերաբերյալ իրականացվել են արդյունավետ քննարկումներ:

Միաժամանակ, հաշվի առնելով, որ Չեխիայի Հանրապետությունում ՊՄԳ գործարքների կնքումը կիրառվում է միայն տրանսպորտային և երկաթուղային բնագավառներում, այցի շրջանակում հրավիրվել էր նաև ներկայացուցիչ Չեխիայի Հանրապետության տրանսպորտի նախարարությունից, որը մանրամասն ներկայացրել է ՊՄԳ քաղաքականության առանձնահատկությունները Չեխիայում:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հանդիպման ընթացքում փաստաթղթի ստորագրում կամ որոշման ընդունում նախատեսված չէր:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Հաշվի առնելով, որ ներկայումս նախատեսվում է հանրային ներդրումների կառավարման, այդ թվում՝ պետություն-մասնավոր գործընկերության գործառույթների փոխանցումը ՀՀ էկոնոմիկայի նախարարությունից ՀՀ ֆինանսների նախարարությանը, որի իրավական դաշտի մշակման աշխատանքներում ներգրավված է լինելու նաև գնումների քաղաքականության վարչությունը, նշված ուսուցողական այցի շրջանակում ձեռքբերվող գիտելիքները և միջազգային փորձի ուսումնասիրությունը հաջողությամբ կկիրառվեն վարչության աշխատանքի մեջ:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

04.12.2024 թ